


ԿԵՑՑԷ ՄԻԱՅԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ


ՉՈՐՍ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐ



ՉՈՐ. ՆԱԶԱՐԲԵԳԵԱՆ
ՀԱՅՈՑ ՍՊԱՐԱՊԵՏ



ՉՈՐ. ՍԻԼԻԿԵԱՆ
ԱՐԱՐԱՏԵԱՆ ՉՈՐԱՄԱՏԵՐՈՒ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐ



ՉՈՐ. ՓԻՐՈՒՄԵԱՆ
ՍԱՐԳՍԱՐԱՊԵՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐ



ԳՐՈ
ԲԱՇ-ԱՐԱՐԱՆԻ ՃԱԿԱՏԻ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

ՄԱՅԻՍ 28

1918ին ստեղծուեցաւ Հայաստանի Հանրապետութիւնը, որ հիմնովին փոխեց հայ ժողովուրդի բաղաբառական մտածելակերպը:

Հայաստանը, իբրև միջազգային, բաղաբառական և իրաւական միասն, կը ներկայացնէր մեր ամբողջ ժողովուրդի բաղձաձեռք՝ անկախ ըլլալ:

Թէև հայ պետական վարչաձեւը փոխուեցաւ, բայց Հայաստանի պետականութեան գաղափարը, անկախութեան ճգնաժեր և Հայաստանը մնացին:

Այսօր, Հայաստանը, թէև Խորհրդային Միութեան մէկ մասը կը կոչուի, բայց Հայկական Դատը կը բնորոշուի Հայաստանի պետական գոյութեամբ: Նախկին բոլոր միջազգային յանձնառութիւնները, ներք յօդուածը, բարենորոգումները, և այլն գոյութիւն չունին այլևս բոլորն ալ իբրև աւելորդ աքթեր մէկ կողմ նետուեցան, մէջտեղ մտաւ Հայաստանի Հանրապետութիւնը իբր բաղաբառական ազգային, հայ ժողովուրդի նպատակները ամփոփող մէկ դարձօն:

Եւ ասիկա զեռ չէ պետական մայրաքաղաք, ինչպէս որ պէտք է:

Ասանց հասկնալու պետականութեան արժէքը, աւելի արժէք կու տան վարչաձեւին, բան պետականութեան գոյութեան փաստին: Վարչաձեւերը չեն, որ կը բնորոշեն ազգերու գոյութիւնը. ասանք կառավարելու եղանակներ են, որոնք կը փոխուին, իսկ ազգը և երկիրը գոյութիւն ունին, կը մնան: Հայաստանի Հանրապետութեան ստեղծումը հայ ժողովուրդին տուած է ազգային պետականութեան իրատուութիւն: Վարչաձեւերը կը փոխուին, կ'անցնին, բայց Հայաստանի պետութիւնը կը մնայ և այս խոչըր երեւոյթ մըն է, հայոց պատմութեան կարևորագոյն մէկ ապացոյցը:

Հայաստանի շահերը, Հայաստանի բարգաւաճումը, պետական, ազգային մշակութային բոլոր խնդիրները պէտք է դերաստուին մնացեալ բոլոր հարցերէն, մինչև Անկախ և Ազատ Հայաստանի վերջնական իրադրոժումը:

Ս. ՎՐԱՏԵԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ
ՆԵՐԿԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

ՄԱՅԻՍ 28

Գալիս էր թուրքը և գալիս էր հայութեան վրայ: Հային էր վիճակուած պաշտպանել Կովկասի ճակատը: Թաթարը մասը մասին չէր դարձուած: Վրացին վէճ ու վրէժ չունէր թուրքի դէմ և Թաթարին դաշնակից՝ իր դործերը կարգադրում էր զիւստական ճանապարհով: Միայն Հային էր, որ պէտք էր և պետութիւն կառուցէր իր կիսաւեր հայրենիքում, և սովաճար բարձրութիւններ կերակրէր, և ժողովուրդ ու հայրենիք պաշտպանէր թուրքի դէմ, որ գալիս էր հարաւից և Թաթարի դէմ, որ խրատու էր երկրի մէջ և թիկունքում:

Գալիքն ահաւոր էր և դործն ամենի. պէտք էր ճիւղերի դերմարդկային լարում: Նման պայմաններէ մէջ պատմական հայութիւնը լքած էր իր հայրենիքը և բռնած գաղթի ճամբան: Նոյնը փորձեց և նոր հայութեան ապահով դասը, բանկով Ռազմավիրական խնամքին, որ միակ ելքն էր խուսափումի և տանում էր Ռուսաստան: Բայց Գալիսկոյութիւնը և նրան ապաւինած ժողովուրդը վճռեցին մնալ, ճակատ յարդարել և կռիւ ընդունել մեր դարաւոր ոտնի դէմ, որ Հայաստան աշխարհի մեծ մասը մաքրած էր հայ տարրից և գալիս էր միւս մասը մաքրելու:


Սա մի դերագոյն վճիռ էր, մի հերոսական կեցումը, մի անօրինակ վճռականութիւն և նրա փառքը պատկանում է Հ. Յ. Գալիսկոյութեան և հայ ժողովուրդի խոնարհ խաւերին, որ տէր կանգնեցին հայ հայրենիքին, կազմակերպեցին նրա պաշտպանութիւնը և զրին անկախ Հայաստանի պետութեան հիմքերը:

Հետագայ դարերի հայ մարդը պիտի զարմանայ այն սերունդի վրայ, որ օրհասի տարիներին հերոսական վճռականութեամբ տէր կանգնեց իր անտէր հայրենիքին և իր անվարժ ու թոյլ ձեռքով, բայց և անվիշեր հողով կարողացաւ աւերակներ և սովի միջից նոր Հայաստան ստեղծել:

Այս բախտորոշ և դերագոյն վճռականութեան տունն է Մայիս 28ը:

Ն. ԱՂԲԱԵԱՆ

ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ



ՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԵՑ ԱՇԽԱՐՀԱՉՈՐԳԸ
ԴԷՊԻ ՍԱՐՏԱՐԱՊԵՏԻ ՌԱԶՄԱՃԱԿԱՍԸ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԷՆՔՆԵՐԻՆ

ԱՇԽԱՍԱՆՔԻ ՕՐԷՆՔ

Աշխատանքի ժամանակն օրուան ընթացքում պէտք է լինի ոչ աւել քան ութ ժամ, իսկ շաբաթուայ ընթացքում՝ 46 ժամ:

Արտաժամանակեայ աշխատանքները վարձատրուում է հետեւեալ նշդէ բացառութիւններ, օրինակ՝ երբ շաբաթուայի դադարումը սպասուում է նկարի փնջացումն և այլն):

Արտաժամանակեայ աշխատանքները վարձատրուում է հետեւեալ ձևով. առաջին երկու ժամ մէկուկէս շաբով, իսկ յետագայ ժամերը՝ կրկնակի շաբով:

Իւրաքանչիւր բանուորի արտաժամանակեայ աշխատանքի տեւողութիւնը օրուան ընթացքում պէտք է լինի ոչ աւել քան 4 ժամ, ընդամենը սովորական աշխատանքի ժամանակի հետ միասին՝ 12 ժամ:

14 տարեկանից փոքր հասակ ունեցողներին աշխատանք տալն արգելուած է:

Կանայք և 17 տարեկանից փոքր անչափահասները պէտք է ազատ լինեն ստորերկրեայ աշխատանքներից:

14-17 տարեկան անչափահասները օրուան ընթացքում կարող են աշխատել ոչ աւել քան 6 ժամ, հաշուելով նաև ճաշի դադարը:

Իրական սեռին պատկանող և 14-17 տարեկան անչափահասներին արտաժամանակեայ աշխատանքներ տալն արգելուած է:

ՀՈՂԸ ԳԻՒՂԱՑԻՆԵՐՈՒՆ

1920 Յունիս 4ին կը բռնակարկուի յատուկ օրէնք մը հողային հարցի մասին, որուն Յոգ կէտը կը ճշդէ օրէնքին հիմնական նպատակը:

Հողային յատուկ մարմինների պարտականութիւնն է շրջել գաւառները և տեղն ուսնող անհնազանդ ժամանակում պետականացրել բոլոր մասրատիրական, վանճապատկան, վաճառական, կենդանական և լինելու հողերը: Պետականացած հողը բաշխել գիւղացուներին: Լինալ գիւղերում նոր ազգաբնակչութիւն տեղաւարելու համար յատկացնել հող:

1920, Յունիս 8

Ի ՆՊԱՏ ԺՈՂՈՎՈՒՐԻՆ

1920 Ապրիլ 13ին երեսանի մէջ բացուած կը կատարուի Հայաստանի բժշկական համագումարին:

Համագումարը կը մշակէ օրինադիւմ մը բժշկական խնամքի մասին:




Մշակուած օրինադիւմն հիմնական կէտը կ'ըլլայ հետեւեալը. «Սզգարակալութիւնը ապահովում է կառավարութեան և նրա օրգանների կողմից օրի բժշկութեամբ»:

ԺՈՂՈՎՐԻՍՎԱՐ ՍԿՉՔՈՒՆՔՆԵՐ

Հայաստանի Նախարարներու Խորհուրդը իր 1919 Մարտ 12ի նիստի կը մշակէ «ՕՐԷՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՈՐՀՐԳԱՐԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆՑ»:

ՓԱՌԲ ՅԱՆՈՒՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԶՈՅՈՒԱԾ ԿԵՐՈՍՆԵՐՈՒՆ

ԱՐԱՄ (1879 - 1919 - 1969)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ Ա. ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ՄԷՋ

Մ Ա Յ Ի Ս 28

Երեք տարիներ միայն կը բաժնեն 1918ը՝ 1915էն, Հրա-
շարժաւ Յարութիւնը՝ ցեղասպանութեան եւ աքսորի մասը
օրերէն: Պատմութիւնը արձանագրած է այս իրողութիւնը՝
իրեն մէկը այն դժուար բացատրելի երեւոյթներէն՝
որոնք պատմական հրաշքներ կրնան նկատուիլ: Պատմական
հրաշք մը՝ որու դադարները հայ ժողովուրդին միայն ծա-
նօթ է: Կեանքին ու լոյսին ձգտող, Կեանքին ու Լոյսին հա-
մար կուրծի եւ մեռնիլ դիտող այս ժողովուրդին:

1918ի Մայիսեան հրաշքը հասարակաց թշնամիին դի-
մաց հայ ժողովուրդի մէկ մարդու նման ծառանալուն մէջ
կը կայանայ: Հայ ժողովուրդի միասնականութեան, ազգա-
յին դոյառեւան հաւաքական կամօրի միասնաձուռ արտա-
յայտութեան մէջ է անոր դադարները: Գերազանց վտանգի
ամբողջական դիտակցութիւնն էր որ մարտի դաշտ լինելուց
հայութիւնը՝ իր ամբողջութեան մէջ, որ օրհասական դու-
պարին մէջ նետեց բոլորը անխտիր՝ արեւմտահայ թէ արե-
ւելահայ, զինուոր թէ քաղաքացի, երիտասարդ թէ ծերու-
նի, կին թէ երեխայ: Կեանքի եւ մահուան օրհասական դու-
պար՝ որ սակայն, Սարգստապատի, Բաշ Աբարանի եւ Ղա-
րաբի լիսէի դիւցազնադաշտերուն վրայ, գերեզման հերո-
սամարտի մը վերածուեցաւ, կասկեցնելով թշնամի կազմա-
կերպումը բանակներուն յառաջադաշտը, եւ աւելին՝
պարտութեան մատնելով զանոնք:

Բայց Մայիս 28ի խորհուրդը դուրս կու գայ հերոսա-
մարտի մը եւ յաղթանակի մը ընթացիկ ոգեկոչումէն: Կը
նոյնանայ ան Հայոց Պատմութեան ազամանդեայ շղթային
հետ, որմէ դարերու հասանքին հետ՝ ազատ ու անկախ ազ-
րելու սրբազան դիմումութիւնը կ'արտացոլայ, իբրեւ ամե-
նաշէիզ օղակներէն մէկը անոր:

Ազատութեան եւ Անկախութեան տօնն է Մայիս 28ը:
Ազատութիւն եւ անկախութիւն՝ որոնք դարձնուեցան Սար-
գստապատի, Բաշ Աբարանի ու Ղարաբի լիսէի, ծնունդ
տաին Հայոց Ազգային Խորհուրդի յայտարարութեամբ եւ

մարմին ստացան Հայաստանի Հանրապետութեամբ: Դարե-
րու դերութեանն ետք, հայ ժողովուրդը, անսակարկ կեր-
պով թափուած իր արեան գնով, վերստին ձեռք կը բերէր
իր կորսնցուցած սեփական հայրենիքն ու քաղաքական ան-
կախութիւնը:

Ազատ ու անկախ ազրելու հայ ժողովուրդի բնածին
ձգտումի արտայայտութեան տօնն է Մայիս 28ը: Տօն է ան
հերոսական մարտնչութիւնի եւ դիտակցական նահատակու-
թեան՝ ի խնդիր սեփական, անկաշկանդ զոյութեան: Տօն է
ազգային հպարտանքի:

Ժողովուրդները շնն մեռնիլ ազատութեան եւ անկա-
խութեան իրենց ձգտումին, ազատութեան եւ անկախու-
թեան ի խնդիր իրենց մղած պայքարին հետեւանքով: Կը
մեռնին անոնք՝ երբ այդ ձգտումը կը դադրի իրենց մէջ:

Ժիշդ է, կարճատեւ եղաւ Հայաստանի Հանրապետու-
թեան կեանքը, ու դժուարութիւններով լեցուն: Կարճատեւ
եղան անկախութիւնն ու ազատութիւնը: Մակայն դարերու
սարկուծեանն փրկուեցաւ Հայաստանը, որ դարերու իջ
նայի հպարտ, բարձրաճակատ:

Չկայ այսօր Հայաստանի Հանրապետութիւնը, որպէս
ազատ եւ անկախ պետութիւն: Կայ Մակայն Հայաստանը՝
իր պետական կառոյցով, սեփական դիմադրով, ազգով, հո-
ղով, մշակութային եւ քաղաքակրթական նուաճումներով:
Եւ կայ դարերուն համար:

Չէ իրազորուած Սեւըր տակաւին: Պատմութեան ճի-
րաններէն խլուած փաստաթուղթ է ան սակայն, որու իրա-
կանացման հետամուտ է ամէն մէկ հայ, ուր ալ որ դառնուի
ան, արտայայտուի կամ ոչ:

Մայիս 28ը, իր բաղձակողմանի խորհուրդով, անկե-
նորդարձ թուական է Հայոց Պատմութեան մէջ:

Հատուած մը Լ. Յ. Դ. Բիւրոյի 1965ի կոչէն,
հրատարակուած Մայիս 28 Յիմամակիմ աքթի

Խրոխտ, հպարտ եւ հերոսական Ղարաբաղի ծնունդ է
ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ, որ լոյս աշխարհ եկաւ հայոց մը-
թազնած եւ մտայլ երկնակամարին տակ, ուղիղ 90 տարի
առաջ:

Սակայն այդ յանդուգն ու խիզախ դարաբաղչիին վի-
ճակուեցաւ ցրուելու մութ ամպերը, որպէսզի հայոց աշ-
խարհը լուսաւորուի ՄԱՅԻՍ 28ի հրափայլ ճառագայթ-
ներով, եւ իր անունը ոսկի գիրերով արձանագրուի մեր
պատմութեան հազարամեայ մատենանին մէջ:

Ըմբոստ ու հրաբորբոք տակաւին աշակերտական նրա-
արանին վրայ, անոր հոգին ու միտքը պարուրուեցաւ հայ
ժողովուրդի ցաւերով եւ տառապանքներով, եւ փոթորիկէ
փոթորիկ նետուելով, ան ալեկոծ ծովուն մէջ կրցաւ հայոց
ջրամոյն նաւը փրկարար կայանին հասցնել՝ հոն ծածա-
նելով անկախութեան դրօշը:

Ոչ թրջական բանտին շարժարաններն ու բարբարո-
սութիւնները եւ ոչ ալ իրարու յաջորդող քաղաքական
տաղանայներն ու դաւերը կրցան խորտակել Արամի ան-
զըրդուելի կամքն ու հաւատքը: Ան կը հաւատար իր ժո-
ղովուրդի հրաշագործ ուժին եւ զայն կ'առաջնորդէր դէ-
պի վերջնական յաղթանակ՝ կերտելու համար հայկական
նոր պետականութիւնը, որ վերածնունդն էր նաեւ 1915ի
Մեծ Աղէտին դիմադրանող հայութեան:

Հայկական այդ հրաշքը սրբազործուած ու անմահա-
ցած է այսօր Մայր Հայրենիքին մէջ, ուր Սարգստապա-
տի արինաների դաշտավայրին վրայ կանգնած է Յաղ-
թանակի մարմարեայ բարձրաւայաց հոյակապ կոթողը,
որուն ճակատին ապագայ պատմութիւնը պիտի դրոշմէ
Արամի անունը:

Ղարաբաղի, Կարսի եւ Երեւանի յեղափոխական բու-
րայի մէջ թրծուելով, ան կը նետուի վասպուրականի հը-
րաբային խառնարանը, որ պիտի պայթէր 1915ի Ապրի-
լին՝ դիւցազնային նոր էջ մը եւս աւեցնելով հայ ժողո-
վուրդի հերոսական պատմագրքին մէջ:

Եւ իրօք, Արամ հանդիսացաւ Վանայ հերոսամարտի
կազմակերպիչ ոգին, մղիչ ուժը եւ հմուտ ղեկավարը:
Այդ դիւցազնամարտէն ծնունդ պիտի առնէր նմոյշը հայ-
կական պետականութեան, երբ նոյն տարին ինք նշանա-
կուեցաւ Վասպուրականի նահանգապետ:

Ինչպէս որ Ղարաբաղի, Կարսի եւ Երեւանի մէջ Ա-
րամ կը նախապատրաստուէր վասպուրականի խիզա-
խումներուն համար, այնպէս ալ Վանայ մէջ ան հմուտ-
ութիւնն եւ փորձառութիւնն ձեռք կը բերէր՝ Արարատեան
թիւնին մէջ անկարելին կարելի դարձնելու եւ հիմը դնե-
լու այսօրուան լուսապայծառ Հայաստանի:

Պատմութեան արդար գնահատանքն է, որ Արամ Մա-
նուկեան կը կոչուի ՀԻՄՆԱԴԻՐԸ Հայաստանի Հանրա-
պետութեան:

Սակայն, անողոր է ճակատադիրը: Հազիւ հայոց պե-
տական Արշալոյսը տեսած, մեր նորադոյն պատմութեան
այդ եղակի դէմքը, ուղիղ յիսուն տարի առաջ, 1919 Յուն-
ուար 29ին, հրաժեշտ կու տար այս աշխարհին՝ զբիւր-
համար անմահութիւնը:

Ա. Ա.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ Ա. ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՏՐՊՔԵՃԱՆԻ
ՏԱՐԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԲՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Երեւանի «Հայրենիքի Չայն» շարժաթիւքով, 20 նոյեմբեր 1968ի
թիւով հրատարակած է Խորհրդային Հանրապետութիւններու բը-
նակութեանց եւ տարածութեանց պատկերը, «1968 թուականի
Յունուար 1ի տուեալներով»:

Կարտադրեց Հայաստանի, Վրաստանի եւ Ատրպէյճանի յա-
տուկ թիւքը:

ՏԱՐԱՅՈՒԹԻՒՆԸ. — Հայաստան՝ 29-800 քառակուսի քիւ-
մէդր, Վրաստան՝ 69-7000 քառակուսի քիւմէդր, Ատրպէյճան
80-600 քառակուսի քիւմէդր:

ԲՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ. — Հայաստան՝ 2-306-900 քնակէշ, Վրաստան՝
4-859 000 քնակէշ, Ատրպէյճան՝ 4-917-000 քնակէշ: